ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

(1920 – 1930 –ական թթ.)

Սամվել Մկրտչյան

Հայաստանում խորհրդային իշխանության սկզբնական շրջանում Քրիստոսի Ծննդյան (փոքր Զատիկ) տոնի կապակցությամբ կազմակերպվում էին «հականնդյան կամպանիաներ», որոնք տևում էին հունվարի 1-7-ը:[1]

Այդ օրերին հակակրոնական և հականնդյան թեմաներով զեկուցումներ էին կարդում ակումբներում, կրթական հաստատություններում, գործարաններում, բանակում և այլուր:[2]

Իշխանությունների հրահանգներով տեղական ղեկավարությունը շատ հաճախ արտադրական և ուսումնական հաստատություններում աշխատանքային էր հայտարարում ոչ միայն Քրիստոսի Ծննդյան օրը, այլև նախորդող ողջ շաբաթը, որի ընթացքում ավելի էին ուժեղացվում հակակրոնական միջոցառումները:[3]

Պայքար էր ծավալում նույնիսկ տոնածառ դնելու դեմ, արգելք էր դրվում խմիչքի և նույնիսկ ծննդյան նվերների վաճառքի վրա, քանի որ այդ ամենն իշխանությունների կողմից ընկալվում էին որպես եկեղեցու հետ կապված սովորույթի մնացուկներ:

Հականնդյան միջոցառումներից էր նաև ավանդական այդ տոնի դեմ ստորագրահավաքների «կամպանիան», որի նպատակն էր հասարակական կարծիքի ուժով արգելել եկեղեցական հանդիսությունները: Խոսքը նախ և առաջ վերաբերում էր եկեղեցիների զանգերին, քահանաների կողմից ծխականների տներն այցելելու և օրհնելու արարողություններին:[4]

---

[1] Ինչպես անցավ հականնդյան կամպանիան քաղաքում, Անաստված, 1931, № 1, էջ 17:

[2] Անդ: **Հ. Շաքրո**, Կապի վաշտում, Ավանգարդ, 1 հունվարի, 1929:

[3] Ավանգարդ, 24 դեկտեմբերի, 1929: Քրիստոսի ծննդյան տոնի առթիվ, Անաստված, 1932, № 1-2: Ծնունդի օրը աշխատանքի օր, Ավանգարդ, 6 հունվարի, 1929: Ծննդյան կոմեդիան և վեղարավոր դերասանները, Ավանգարդ, 1 հունվարի, 1929: **Ռ. Փորսուղյան**, Մեր անելիքները, Ավանգարդ, 1 հունվարի, 1929:

[4] Ինչ պետք է անենք հականնդյան կամպանիային, Անաստված, 1929, № 11-12, էջ 12, 13:

Քրիստոսի Ծննդյան և Մկրտության տոնի դեմ պետության կողմից կազմակերպած ամենագլխավոր միջոցառումներն էին՝ «կարմիր կնունքը» և «կոմսոմոլի ծնունդը»:

Շատ վայրերում (Դիլիջան[1], Էջմիածին[2], Աշտարակ[3], Լենինականի գավառ[4], Ղուրդուղուլի [ներկայիս Արմավիր][5] և այլն) «կարմիր կնունքի» արարողություններն անցկացվում էին գրեթե միատեսակ սցենարով: Դրանք տեղի էին ունենում դպրոցներում, ակումբներում ու թատրոններում (երբեմն նաև տանը), որոնց պատերն ամբողջությամբ ձևավորվում էին հեղափոխական լոզունգներով: Սկզբում տեղի էին ունենում հակակրոնական ելույթներ, զեկուցումներ, դասախոսություններ, իսկ վերջում՝ «Ինտերնացիոնալի» կամ հեղափոխական այլ երաժշտությամբ սկսվում էր օրվա գլխավոր արարողությունը՝ «կարմիր մկրտության» հանդեսը: Երեխաներին «կնքում» էին խմբովին՝ ծնողների ներկայությամբ: Վերջիններս երեխաների ձեռքը բռնած մոտենում էին հանդեսի կազմակերպիչներին (որոնք երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ էին, պարտկոմներ և անաստվածների միության անդամներ) և հանդիսավոր կերպով երեխաներին հանձնում նրանց: «Կնքահոր» ֆունկցիան վերցրած այդ կազմակերպիչներից յուրաքանչյուրն իր սանին խոստանում էր տալ «հեղափոխական ոգի և կոմունիստական առողջ դաստիարակություն»:

Նորովի կնքված երեխաներին գրանցում էին հատուկ գրքույկներում՝ տալով նրանց հեղափոխական անուններ (Լենին[6], Ստալին[7], Մայիսկա[8] և այլն):

Գրեթե նույնատիպ սցենարով էր անցկացվում նաև «կոմսոմոլի ծնունդ» արարողությունը, որը դարձյալ նպատակ ուներ կենցաղից արմատախիլ անել Քրիստոսի Ծննդյան տոնը:

---

[1] Կարմիր կնունք, Մաճկալ, 1924, 12 մարտի:

[2] **Գ. Արծրունի**, Մասսայական աթեիզմի զարգացումը Հայաստանում 1920-1930 թթ., Երևան, 1982, էջ 39:

[3] **Շիշմանյան**, Առաջին Կարմիր կնունքը Աշտարակում, Մաճկալ, 1925, 25 հունվարի, էջ 8:

[4] **Ն. Գասպարյան,** Կարմիր կնունք, Անաստված, 1929, № 3, էջ 23:

[5] Կոմսոմոլի ծննդյան տոնը Ղուրդուղուլիում, Մաճկալ, 1925, 25 հունվարի, էջ 8:

[6] **Շադունց**, Խորհրդային մկրտություն, Խորհրդային Հայաստան, 1923, 14 հոկտեմբերի:

[7] **Ն. Գասպարյան,** Կարմիր կնունք, Անաստված, 1929, № 3, էջ 23:

[8] Առաջին կարմիր կնունքը Իմանշալվում, Մաճկալ, 1925, 3 հունվարի:

Քաղաքներում և գյուղերում (Երևան[1], Նոր Բայազետ[2], Եղեգնաձոր[3], Դսեղ[4] և այլն) կազմակերպված «կոմսոմոլի ծննդյան» արարողությունները հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմել այդ նոր «ծեսի» ընդհանուր կառուցվածքի և գաղափարական ուղղվածության վերաբերյալ: Հանդեսները կազմակերպվում էին ակումբներում, թատրոններում, ուր հակակրոնական ներկայացումներ էին ցուցադրվում, անցկացվում էին փողոցային երթեր՝ հեղափոխական, հակակրոնական ագիտացիոն ազդագրերով:

Հաճախակի նշվող «կարմիր կնունքի»[5] հետ միասին տեղի էին ունենում նաև «նոր ձևի» պսակադրության ծեսեր[6]: Խոսքը հատկապես վերաբերում է «կարմիր հարսանիքներին», որոնք չնայած կազմակերպվում էին նաև ոչ տոնական օրերին, սակայն ունեին նոր գաղափարախոսությունն արտացոլող ընդհանրական սցենարներ: Այս առումով շատ բնութագրական է հետևյալ արարողությունը. «Այս տարի Կարմիր բանակից վերադարձած ընկ. Բենիամին Աբրահամյանը ամուսնացավ մի չքավոր գյուղացու աղջկա հետ: Վորոշեցին հարսանիքն անել նոր կենցաղով. այդպես ել արին: Հարսանիքի որը Բենիամինենց բակը, կտուրը, ծառերի վրա, լեցվել եր յերկսեռ բազմություն: Ժամը 4-ին նորապսակները ուռռաների, կեցցեների տակ նստեցին կառք և առաջ անցան. ամբողջ բազմությունը հետևեց նրանց: Յեղավ ճաշկերույթ և զանազան պարեր: Իհարկե այս բոլորը դուր չեր գալիս տերտերներին: Հարսանիքը վերջացավ մեծ խանդավառությամբ: Գյուղացիության վրա մեծ ազդեցություն թողեց ընկ. Բենիամինի նոր կենցաղով արած հարսանիքը. - *Խմբագրության կողմից*. Ընկ. Հմայակի նկարագրած հարսանիքը նոր կենցաղի տիպիկ արտահայտություն չի: Իհարկե լավ է, վոր ժամից ու տերտերից հրաժարվել են, բայց այդ դեռ բավական չե ճաշկերույթ, թամաշա, կառքով սլանալ-այդ բոլորը տեղի յե ունենում նաև հին կենցաղում: Հարսանիքը

---

[1] Ծննդյան տոնը Երևանում, Խորհրդային Հայաստան, 1923, 24 հունվարի, էջ 4:

[2] **Գ. Արծրունի**, նշվ. աշխ., էջ 39-40: **Նշանյան,** Կոմսոմոլի ծնունդը գյուղում, Մաճկալ, 1928, 15 հունվարի:

[3] **Գ. Արծրունի**, նշվ. աշխ., էջ 37-38:

[4] **Մտրակ**, Կոմսոմոլի ծնունդը Դսեղում, Մաճկալ, 1925, 15 հունվարի:

[5] Կարմիր կնունքը Գյուդակլու գյուղում, Մաճկալ, 1925, 25 հունվարի, էջ 8: Կոմսոմոլի ծննդյան տոնը Ղուրդուղուլիում, նշվ. աշխ., էջ 8:

[6] Կարմիր պսակ, Մաճկալ, 1925, 25 հունվարի, էջ 8:

նոր կենցաղով կլիներ, յեթե որինակի համար, հարսանիքում բացակայեր գինին, կամ նորապսակը հարսանիքի առթիվ անդամագրվեր վորևե հասարակական կազմակերպության, կամ յեթե հարսանիքն ոգտագործվեր հակակրոնական պրոպագանդի համար և այլն»[1]:

Նորաստեղծ արարողությունների կազմակերպիչներն իշխանության ներկայացուցիչներն էին, կոմերիտականները, տեղական ակտիվիստները, նրանց կանայք, երեխաները[2], ինչպես նաև կարմիր բանակայինները[3]:

Հալածական մեխանիզմները գործի դնելով՝ իշխանություններին հաջողվեց կրճատել, բայց ոչ՝ իսպառ վերացնել հին ծեսերն ու սովորույթները: Եկեղեցիները փակելով, նրա սպասավորներին հալածելով, հավատացյալ ժողովրդին վախեցնելով, հակակրոնական դասախոսություններով, երթերով, թատերական ներկայացումներով և վերջապես՝ «կարմիր կնունքի» և կոմսոմոլի ծննդյան միտինգային հանդիսություններով հնարավոր չէր վերացնել այն ծեսերն ու սովորույթները, որոնք դարավոր ավանդույթներ ունեին և նույնիսկ այդ պայմաններում էլ շարունակում էին գոյատևել:

Ժողովուրդը դեռևս պահում էր Ծննդյան տոնին նախորդող մեկշաբաթյա պահքը՝ իր նվիրական ուտեստով (պասուց տոլմա, ձեթով աղցաններ, փլավ, ձուկ և այլն), որն ավարտվում էր Ծննդյան ճրագալույսի թաթախման գիշերվա արարողություններով: Տոնին հաճախ նաև հարիսա էին եփում[4]:

Պահպանվել էր ծիսական թխվածքների (ասիլ-բասիլ, կլկալ, ղուլաճ, գաթա և այլն) ավանդույթը՝ ժողովրդական հավատալիքների գրեթե ողջ համալիրով: Թխվածքների մեջ դրամ դնելով, ինչպես նաև դրանք կենդա-

---

[1] **Հմայակ**, Կարմիր հարսանիք, Անաստված, Երևան, 1929, № 4, էջ 17:

[2] **Մտրակ,** Կոմսոմոլի ծնունդը Դսեղում, Մաճկալ, 1925, 15 հունվարի:

[3] **Նշանյան,** Կոմսոմոլի ծնունդը գյուղում, Մաճկալ, 1928, 15 հունվարի:

[4] **Ս. Մկրտչյան**, ԴԱՆ (դաշտային ազգագրական նյութ), Հրազդանի շրջան (գ. Բջնի), 1987, տետր № Գ, էջ 36: ԴԱՆ, Հրազդանի շրջան (գ. Բջնի), 1987, տետր № Դ, էջ 6: ԴԱՆ, Ախուրյանի շրջան (գ. Լեռնուտ), 1987, տետր № Զ, էջ 47: ԴԱՆ, Հրազդանի շրջան (գ. Արզական), 1987, տետր № Բ, էջ 15: ԴԱՆ, Ապարանի շրջան (գ. Վարդենուտ), 1986, տետր № 1, մաս 1-ին, էջ 1-2: ԴԱՆ, Ապարանի շրջան (գ. Քուչակ), 1986, տետր № 1, մաս 1-ին, էջ 11-15: ԴԱՆ, Արագածի շրջան (գ. Նորաշեն), 1986, տետր № 1, մաս 2-րդ, էջ 40-41: ԴԱՆ, Արագածի շրջան (գ. Գեղադիր), 1986, տետր № 1, մաս 2-րդ, էջ 49-50: ԴԱՆ, Արագածի շրջան (գ. Գեղաձոր), 1986, տետր № 1, մաս 2-րդ, էջ 70-72:

նիների եղջյուրներին անցկացնելով գուշակություններ էին անում՝ նոր տարվա սպասվելիք հարստության կամ առատ ցորեն ունենալու ակնկալիքով:

Հավատում էին Քրիստոսի Ծննդյան կեսգիշերին հոսող ջրերի կանգ առնելու կախարդական ակնթարթին, որի ժամանակ ջուրը նետած բոլոր առարկաներն «անպայման ոսկի էին դառնում»:

Չնայած հալածանքներին, մասամբ պահպանվել էր նաև Ջրօրհնեքի ծեսը՝ շքեղ զգեստավորված եկեղեցու հոգևոր սպասավորների թափորով, բուրվառով, խաչվառով, շարականներով, մեռոնը ջրի մեջ կաթեցնելով և խաչը ջուրը գցելու արարողություններով: Խաչը ջրից հանողը, որն ստանում էր խաչի քավոր տիտղոսը, դառնում էր տվյալ բնակավայրի հարգված մարդկանցից: Խաչը հանելու թույլտվության համար նախօրոք պետք է որևէ նվեր կամ դրամ տրվեր քահանային, իսկ արարողությունից հետո խնջույք կազմակերպվեր՝ հրավիրելով մերձավորներին ու պատվավոր անձանց: Առկա էին նաև օրհնած ջրի հետ կապված հավատալիքներ, որոնք ի զորու էին մարդկանց ու կենդանիներին պահպանել հիվանդությունից և լի պահել ցորենի շտեմարանները[1]:

Որոշ չափով տարածված էին շնորհավորական փոխայցելությունները՝ նախապատվությունը տալով մերձավոր ազգականներին և սգավորներին:

Մասամբ պահպանվել էր նաև մատաղ անելու սովորույթը, որը կազմակերպելու համար եկեղեցականները (տերտեր, ժամկոչ) երբեմն դրամ էին հավաքում համայնքի տնտեսություններից:

Եկեղեցիները փակելու և հոգևորականներին հալածելու միջոցառումներով նոր հասարակարգի պաշտպանները փորձում էին ժողովրդին հե-

---

[1] **Ս. Մկրտչյան**, ԴԱՆ, Ապարանի շրջան (գ. Քուչակ), 1986, տետր № 1, մաս 1-ին, էջ 14-15: ԴԱՆ, Արագածի շրջան (գ. Ծաղկահովիտ), 1986, տետր № 1, մաս 2-րդ, էջ 25-26: ԴԱՆ, Արագածի շրջան (գ. Հնաբերդ), 1986, տետր № 1, մաս 2-րդ, էջ 58-60: ԴԱՆ, Արագածի շրջան (գ. Գեղաձոր), 1986, տետր № 1, մաս 2-րդ, էջ 70-73: ԴԱՆ, Հրազդանի շրջան (գ. Քաղսի), 1987, տետր № Դ, էջ 6-8: ԴԱՆ, Հրազդանի շրջան (գ. Բջնի), 1987, տետր № Գ, էջ 39: **Նիմանդ,** Եկեղեցական տոներ, Երևան, 1931, էջ 30-46: **Ռ. Շիրոյան**, Հակածննդյան կամպանիաների մի քանի խնդիրներ, Ավանգարդ, 1929, 6 հունվարի:

ռու պահել ավանդական ծեսերից: Այդ միջոցառումները վերելք ապրեցին հատկապես կոլեկտիվացման տարիներին[1]:

Ինչ վերաբերում է ընտանիքին, ապա այն համեմատաբար բարվոք վիճակում էր, քանի որ ընտանեկան ներփակ միջավայրում, ազգականների շրջանակում ավելի ապահով էին նշվում ավանդական ծեսերը, որոնք ևս զերծ չէին պետական հալածանքներից[2]:

Եկեղեցական տոների, ծեսերի և մասնավորապես Քրիստոսի Ծննդյան հանդեպ պետության բացասական վերաբերմունքն արտացոլվեց նաև «բոլշևիկյան ֆոլկլորում»[3]: Աթեիզմի գաղափարախոսությամբ լեցուն այդ «ստեղծագործություններում» ծաղրանքի էին ենթարկվում Հիսուս Քրիստոսը, ինչպես նաև այն սրբերը, որոնք առնչվում էին Աստծո Որդու և նրա ծննդյան ու մկրտության հետ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖՈԼԿԼՈՐ

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴ

Էսոր օրը արև ա
Տերտերի սորտը սև ա
Փիլոնի տակ ծածկված
Նա մի ագահ սև դև ա:

Ծննդյա տոն ա, զատ չկա
Հոգի ու հավատ չկա,
Բացի մի ջուխտ պառավից
Ժամում աղոթող չկա:

Ցելեք խավար վանքերից
Կրոնի սև ճանկերից,

---

1 **Ս. Մկրտչյան**, ԴԱՆ, Ապարանի շրջան (գ. Վարդենուտ), 1986, տետր № 1, մաս 1-ին, էջ 2: ԴԱՆ, Ապարանի շրջան (գ. Քուչակ), 1986, տետր № 1, մաս 1-ին, էջ 15: ԴԱՆ, Արագածի շրջան (գ. Նորաշեն), 1986, տետր № 1, մաս 2-րդ, էջ 40: ԴԱՆ, Արագածի շրջան (գ. Գեղադիր), 1986, տետր № 1, մաս 2-րդ, էջ 49: ԴԱՆ, Արագածի շրջան (գ. Հնաբերդ), 1986, տետր № 1, մաս 2-րդ, էջ 59-60: ԴԱՆ, Արագածի շրջան (գ. Գեղաձոր), 1986, տետր № 1, մաս 2-րդ, էջ 72: ԴԱՆ, Հրազդանի շրջան (գ. Քաղսի), 1987, տետր № Դ, էջ 7: **Վ. Վասիլյան**, Ունքը շինելու տեղ աչքն են հանում, Մաճկալ, 1925, 25 հունվարի, էջ 4:

2 **Ս. Մկրտչյան**, ԴԱՆ, Քուչակ, էջ 11-12:

3 Ծննդյան երգ, Ավանգարդ, 1929, 6 հունվարի:

Յեկեք մենք ձեզ կազատենք
Յեկեղեցի բանտերից[1]:

...Ու Գալիլիայի Նազարեթ քաղաքում
Մարիամ անունով մի կին եր ապրում,
Գեղեցիկ եր նա, սիրուն ու նախշուն,
Տեսնողը տեսքից դառնում եր անքուն:

... Լավ , չասենք ընչի՞...եդպես սիրունը
Փայ պիտի դառնար ծերուկ դուրգարի,
Ծերուկ ու անկար, վորի անունը
Ինչպես լավ գիտենք, Հովսեփ եր «բարի»:

Հովսեփը ծերուկ իրեն կորցրել,
Ձահելի նման ծունկի յե իջել,
Իր սերն ե հայտնում, աղերսում, յերգում...
(Հովսեփն ասում են շատ լավ եր երգում)[2]:

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴ
(ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՇՐՋԱՆ)

Սամվել Մկրտչյան

Բանալի բառեր *- Քրիստոսի Ծնունդ, Փոքր Զատիկ, տոն, Կարմիր Կնունք, Կոմսոմոլի Ծնունդ, ավանդական, խորհրդային, հավատալիք, բոլշևիկ, կենցաղ, ծես, տոնածառ, ուտեստ, եկեղեցի*

Այդ օրերին կազմակերպվում էին «հակաձննդյան կամպանիաներ»: Ակումբներում, թատրոններում հակակրոնական ներկայացումներ էին ցուցադրվում, անցկացվում էին փողոցային երթեր՝ հեղափոխական ազդագրերով: Այդ միջոցառումները հատկապես վերելք ապրեցին կոլեկտիվացման տարիներին:

Ղեկավարությունը շատ հաճախ արտադրական և ուսումնական հաստատություններում աշխատանքային էր հայտարարում ոչ միայն Քրիստոսի Ծննդյան օրը, այլև նախորդող ողջ շաբաթը, որի ընթացքում ավելի էին ուժեղացվում հակակրոնական միջոցառումները:

---

[1] **Վարսենիկ**, Ծննդյան երգ («շախով շուխովի» եղանակ), Ավանգարդ, 1929, 6 հունվարի:

[2] **Էդուարդ Խոճիկ,** «Ծննդյան» առասպելի յեվս մի վարիանտ (հատվածներ պոյեմից), Անաստված, 1928, Երևան, № 11-12, էջ 2:

Պայքար էր գնում նույնիսկ տոնածառ դնելու դեմ: Արգելքներ էին դրվում խմիչքի և ծննդյան նվերների վաճառքի վրա, որոնք պետության կողմից ընկալվում էին որպես եկեղեցական սովորույթի մնացուկներ:

Կազմակերպվում էին ստորագրահավաքներ, որի նպատակն էր արգելել կրոնական հանդիսությունները: Խոսքը հատկապես վերաբերում էր եկեղեցու զանգերի հնչեցնելուն, քահանաների կողմից ծխականների տներն օրհնելու արարողություններին և այլն: Տոնի դեմ պետության կողմից կազմակերպած գլխավոր միջոցառումներից էին՝ «կարմիր կնունքը» և «կոմսոմոլի ծնունդը»:

Հալածական այդ պայմաններում էլ ժողովուրդը դեռևս պահում էր Ծննդյան տոնին նախորդող մեկշաբաթյա պահքը: Պահպանվել էր նաև ծիսական թխվածքների ավանդույթը:

Քրիստոնեական այս գլխավոր տոնի հանդեպ խորհրդային պետության ծաղրական վերաբերմունքն արտացոլվեց «բոլշևիկյան ֆոլկլորում»:

РОЖДЕСТВО ХРИСТОВО
(ПЕРИОД БОЛЬШЕВИЗМА)

Самвел Мкртчян

Ключевые слова *- Рождество Христово, Малая Пасха, Красное Рождество, День Рождения Комсомола, традиционный, советский, верование, большевик, быт, ритуал, Рождественская елка, пища, церковь.*

В праздничные дни организовывались “антихристианские кампании”. В клубах, театрах показывались спектакли на антирелигиозную тематику, устраивались уличные шествия с революционными лозунгами. Эти мероприятия пережили свою кульминацию в годы коллективизации.

Власти часто объявляли рабочими днями для производственных предприятий и учебных заведений не только день Рождества, но и всю следующую неделю, в течение которой антирелигиозные мероприятия еще более усиливались.

Преследовалось даже возведение праздничного дерева. Запрещалась продажа напитков и рождественских подарков, воспринимаемых правительством как остатки религиозных обрядов.

Организовывался также сбор подписей, целью которого было запрещение религиозных празднеств. Вопрос особо касался битья в церковный колокол, освящения жилища священником и т. д. Основным методом борьбы с праздником были “красное рождество” и “день рождения комсомола”.

В этих условиях преследования народ все еще сохранял недельных пост, предшествующий празднику. Традиция обрядовых сладстей также сохранялась.

Издевательское отношение советского государства к рождественским праздникам выражалось в “большевистской поэзии”.

THE BIRTH OF CHRIST - CHRISTMAS
(THE PERIOD OF BOLSHEVISM)

Samvel Mkrtchyan

Keywords: *Christmas, Minor Easter, Red Baptism, Komsomol birthday, traditional, Soviet, belief, Bolshevik, the everyday, ritual, Christmas tree, meal, church.*

On the days of this festival “anti-Christmas campaigns” were organized. In the clubs, theatres anti-religious performances were presented, street processions were executed with revolutionary logos. Those measures experienced their zenith in the years of collectivization.

Officials often declared as a working-day for production and educational institutions to prevent celebration not only the day of the Birth of Christ, but also the whole next week, during which the anti-religious measures were still more strengthened.

Even the positioning of the Christmas Tree was persecuted. There were prohibitions set on selling beverages and Christmas gifts, which were comprehended by the government as remnants of religious customs.

Collecting of signatures was organized, as well, the purpose of which was prohibition of the religious festivities. The item specially was sounding of the Church’s rigs, blessing of people’s houses by clergymen etc. One of the main measures against the festival was “the red baptism” and “the comsomol birthday”.

In those conditions of persecution people still managed to preserve the one-week lent, preceding the festival. Tradition of ritual sweet-cakes has also been preserved.

The mocking attitude of the Soviet state toward the main Christian festival was expressed in the “Bolshevik folk-lore”.